ՕԾՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

## Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔՍՐԱՄՅԱՆ

Առաջնորդ Կոտայքի թեմի

*Ծնվել է 1963 թ. հուլիսի 20-ին, Մարտունու շրջանի Երանոս գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:*

*1979-85 թթ. հեռակա կարգով սովորել ու ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժինը:*

*1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1982-84 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո ուսումը շարունակել ճեմարանում: 1988 թ. մայիսի 12-ին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ և նշանակվել «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան» տնօրեն:*

*1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ Եփրեմ Սսեցի Աջապահյան կաթողիկոսի «Մեկնութիւն Յովնանու մարգարէի» թեմայով:*

*1989 թ. հունիսի 11-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

*1989 թ. օգոստոսի 25-ից նշանակվել է Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ:*

*1992 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի կողմից նշանակվել է Սյունյաց թեմի փոխառաջնորդ՝ Գորիս քաղաքում:*

*1993 թ. ապրիլի 3-ից նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդի օգնական և Սևանի ավազանի հոգևոր տեսուչ:*

*1994 թ. հունիսի 3-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ Առաքել Սյունեցու «Ամենայն չար տանջելի է» թեմայով:*

*1994 թ. մեկնել է Գերմանիայի Մյունխեն քաղաք և վեց ամիս կատարելագործվել տեղի Աստվածաբանական համալսարանում:*

*1996 թ. հունիսի 1-ից Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել է Կոտայքի թեմի առաջնորդ:*